12494

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«30» 08 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0151-23

Ձեռնարկողը՝ *«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊԸ*
ք. Մասիս, Հ. Վարդանյանի 10

Գործունեությունը **Մասիս քաղաքի Արարատյան 7 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման *շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0151-23

«30» օգոստոսի 2023թ.

Մասիս քաղաքի Արարատյան 7 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Մասիս համայնք, Մասիս քաղաք

Ներածական մաս. «ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊԸ-ն Մասիս քաղաքի Արարատյան փողոց 7 հասցեում նախատեսում է կառուցել բազմաբնակարան բնակելի շենք:

Արարատի մարզ Մասիս քաղաքի Արարատյան փողոց 7 հասցեում բազմաբնակարան շենքի նախագիծը մշակված է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 03-003-0111-0002 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք, ՀՕ-110 21.06.2014թ.) 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, «ա.» ենթակետի՝ ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախատեսվող բնակելի համալիրի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 6300 ք.մ, ուստի սույն նախատեսվող գործունեությունը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի պետական փորձաքննության և փորձագիտական եզրակացության ձեռք բերում:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախագիծը մշակված է ըստ պատվիրատուի առաջադրանքի և համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը և նորմատիվտեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

Նկարագրական մաս. Բազմաբնակարան բնակեի շենքի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Արարատի մարզի, Մասիս համայնքի Մասիս քաղաքի Արարատյան փողոց 7 հասցեում, Մասիս քաղաքի քաղաքապետարանի շենքից հյուսիս-արևելք, մոտ 300.0 մետր հեռավորության վրա, Արարատյան փողոցի ձախ կողմում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Արարատյան լճակուտակումային հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում, Հրազդան գետի ստորին հոսանքի ավազանի սահմաններում: Այդ պատճառով տարածքը բնութագրվում է բացառապես հարթավայրային ռելիեֆին բնորոշ առանձնահատկություններով: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևմուտք:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 831.0-832.0 մետրի սահմաններում:

Հողատարածքի հարևանությամբ գտնվում են կառուցապատումից ազատ տարածքներ, հասարակական և բնակելի շինություններ:

Տարածքում վտանգավոր սողանքային կամ փլուզման երևույթներ չկան:

Բնության հատուկ պահպանվող և /կամ/ պատմամշակութային հուշարձանների տարածքներ չկան:

Տեղամասում իրականացված հորատման աշխատանքների ընթացքում մինչև 10.0 մետր խորությունը գրունտային ջրերը չեն բացահայտվել:

Հողամասը հարթ է, երկրաբանական տեսակետից բարենպաստ է կառուցապատման համար, կառուցապատված չէ, ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:

Հողի բերրի շերտ համաձայն ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների բացակայում է:

Նախատեսվող բնակելի շենքի կառուցման համար տրամադրած հողամասը գտնվում է գլխավոր ճանապարհի և միջթաղային փողոցի միջանկյալ հատվածում:

Բնակելի շենքը բաղկացած կլինի ավտոկայանատեղիից /-0.8000 նիշ/ և բնակելի 6 հարկերից, կունենա 2 մուտք գլխավոր ճանապարհից և միջթաղային փողոցից դեպի ավտոկայանատեղի և 1 ելք դեպի գլխավոր ճանապարհ:

Ավտոկայանատեղին բաղկացած կլինի 68 տեղից, իսկ բնակարանների ընդհանուր քանակը նախատեսվում՝ 114: Բնակելի շենքը բաղկացած է մեկ գլխավոր մուտքից և 2 երկրորդական մուտքերից: Այն ունի 4 աստիճանավանդակ, որոնց տանող դռները դեպի աստիճանավանդակ բացվող են, հակահրդեհային և ինքնափակվող:

Առաջին հարկի բնակարանները կունենան ելք դեպի ընդարձակ տերրասսաներ: Շենքի տանիքը նախատեսվում է երկլանք կազմակերպված ջրահեռացմամբ՝ բացառելով անձրևաջրերի հոսքը հարևան հողատարածքներ:

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԵՆ՝

Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 6300քմ

Վերգետնյա կառուցապատման մակերեսը՝ 3014 քմ /47.85%/

Ստորգետնյա կառուցապատման մակերեսը՝ 3014քմ

Կանաչապատման մակերեսը՝ 630քմ /10%/

Ճանապարհներ, մայթեր և բացօդյա ավտոկայանատեղի (էկո կանաչ՝ 2656 քմ /42.15%/

Բնակարանների ընդհանուր քանակը - 114 բն

Ավտոկայանատեղերի ընդհանուր քանակը - 68 տեղ

Նախագծվող շենքի կիսանկուղային հարկում նախատեսվել է տարածք, որը արտակարգ իրավիճակների դեպքում կվերածվի ժամանակավոր թաքստոցի: Տարածքը ապահովված կլինի սանհանգույցներով և օդափոխության համակարգով:

Բազմաբնակարան բնակելի շենքի ծխահեռացման և օդափոխության համակարգի աշխատանքային նախագիծը մշակված է նախագծային առաջադրանքի և

ճարտարապետական շինարարական գծագրերի հիման վրա, համաձայն գործող նորմերի և կանոնների:

Նախագիծը մշակվել է ՀՀՇՆ IV-11.07.01.2008 (ՄՍՆ 3.02-05.2003), շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Համաձայն նախնական հայտի տեղեկատվության նախատեսված է օդափոխության բնակարանների սան.հանգույցներից և խոհանոցներից, օդի արտածումը կլինի բնական:

Հակահրդեհային պաշտպանությունը ավտոկայանատեղի համար կատարվում է Ծ.Հ-1, Ծ.Հ-3 ծխահեռացման համակարգերի օգնությամբ, իսկ Դ.Հ-1, Դ.Հ-2 համակարգերի օգնությամբ կատարվում է օդի դմհար ավտոկայանատեղերի նախամուտքերին: Նախատեսված է նաև ծխահեռացում բնակելի հարկերի միջանցքներից Ծ.Հ-2, Ծ.Հ-4, իսկ Դ.Հ-3, Դ.Հ-4, Դ.Հ-5, Դ.Հ-6 համակարգով կատարվում է օդի դիմհար վերելակների հորաններին և բնակելի հարկերի միջանցքներին, աստիճանավանդակներին:

Բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարումը իրականացվելու է համաձայն «Վեոլի Ջուր» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանների:

Ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Ջրամատակարարումն կիրականացվի միանալով Արարատյան փողոցով անցնող d=225մմ ջրագծին, իսկ ջրաեռացումն կիրականացվի միանալով Արարատյան փողոցով անցնող d=250մմ կոյուղագծին:

Ջրամատակարարման և կոյուղու ցանցերի նախագիծը մշակված է ըստ ճարտարապետական գծագրերի:

Համաձայն հայտի շենքում նախագծվել է սառը, տաք ջրամատակարարման, կենցաղային ցանցեր:

Կենցաղային կեղտաջրերը սան-սարքերից ինքնահոս կհավաքվեն և կհեռացվումեն ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց:

Բազմաբնակարան բնակելի շենքի սնումը կիրականացվի «Մասիս» 10/35/6 կվ ենթակայանից սնող «Հիվանդանոց» 6 կՎ ուղղության թիվ 152 հենասյան ճյուղավորումից:

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Հողային աշխատանքները փոսորակում և խրամուղիներում կկատարվեն "հետբահ" CAT 320 էքսկավատորով: Շենքի պատող և կրող կոնստուկցիաների իրականացման համար ընտրված է QTZ 280 XCP330HG(7525-16) կցովի կռունկների կիրառում:

Համաձայն հայտի շինարարության ընթացքում կիրականցվի՝ հանույթ 5850,0մ^3, որից ետլիցքը կկազմի՝ 2300,0 մ^3, իրականացվի նաև ավելորդ հողային զանգվածի տեղափոխում/ համապատասխան մարմինների հետ համաձայնեցմամբ/՝ 3550 մ^3:

Նախատեսվող գործունեությունը իրենից կներկայացնի ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է լինելու շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանա վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի անբարենպաստ ազդեցություններ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ, կարճատև և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- ինժեներական եվ կիրառական գիտությունների համալիր շինարարության ընթացքում
- հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ,
- հողային զանգվածների և շինաղբի տեղափոխման հետ կապված,
- բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- շինհրապարակների տեղադրման հետ կապված,
- շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից պատճառվող անհանգստությամբ
- շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են շինարարական տեխնիկայի աշխատանքի դեպքում: Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը:

Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն հայտի բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի՝

- շինհրապարակի պարբերաբար ջրցանում,
- սորուն շինարարական նյութեր տեղափոխող մեքենաների երթևեկության կազմակերպում թափքի ծածկման պայմաններում,
- շինարարական աղբի տեղափոխման համար փակ ծածկ ունեցող մեքենաների օգտագործում,
- շինհրապարակ մուտք գործող և դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում,
- շինհրապարակում սորուն նյութերի պահեստավորում շինանյութի համար նախատեսված ժամանակավոր պահեստներում կամ ծածկում անջրթափանց պոլիէթելենային թաղանթով,
- շինհրապարակի առանձնացում մետաղաթիթեղյա ցանկապատով կամ հատուկ մեկուսիչ թաղանթով և այլ միջոցառումներ, որոնք նկարագրված և ամրագրված են հայտում:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են առանձնացված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի հնարավոր արտահոսքերը և արտանետումները դեպի մակերևութային և/կամ ստորերկրյա ջրային ռեսուրսներ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է՝

- փոշենստեցման համար ջրցանի իրականացում ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը ներքին բակային ցանցով ուղղում դեպի շինհրապարակում տեղադրված պարզարան, պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացում դեպի տարածքում տեղադրվող պարզարան, պարզարանում տեղի կունենա ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների ժամանակավոր կայանում մակերևութային ջրային ռեսուրսներից հեռու,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումն իրականացում համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդի բերում պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են՝

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային զանգվածը մինչև օգտագործելը կամ տեղափոխելը պահում շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինարարական նյութերը տեղադրում հատուկ տակդիրների կամ անջրթափանց հիմքով բետոնապատ մակերեսների վրա,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ ապահովվում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի կայանում ավազ կամ մանրախիճ տեղադրում: Մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք դեպքերում, փռված ավազի կամ մանրախիճի տեղափոխում համապատասխան աղբավայր և այն փոխարինում նորով:
- աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքի բարեկարգում և մաքրում շինաղբից:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացում՝ կապված բնական աղետների, սողանքների, հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ: Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է՝ կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննում և համապատասխան մասնագետի(երկրաբան) կողմից կազմված եզրակացություն, շինհրապարակի կազմակերպում հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, շինհրապարակն ապահովում հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով, նախատեսված է

ջրաղբյուրների ճանապարհների բաց են լինել, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ, հեղուկ և վտանգավոր նյութերի տեղափոխում շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցում և այլն:

Շինարարության ընթացքում առաջացող աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու համար որպես կարևորագույն միջոցառումներ նախատեսված են՝ խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց մասնավոր բնակելի տների, փոքր բիզնեսի կետերի, այլ հասարակական շենքերի հարևանությամբ, Աղմուկ առաջացնող աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, բոլոր մեքենաների ապահովում լինեն համապատասխան խլացուցիչներով, բացառում անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:

Շինարարական աշխատանքների ընթացքում բուսատեսակների վրա ազդեցություն չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատանքները տեղի են ունենալու քաղաքային ակտիվ միջավայրում: Տարածքում առկա ծառերը պահպանվելու են, ծառահատումներ չի նախատեսվում:

Գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները: Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Մասիս քաղաքի արդեն իսկ կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները հետևյալն են՝

1. Շինարարական աղբ՝ վտանգավորության դասը IV, ծածկագիրը՝ ըստ «Թափոնների ցանկի»՝ 9120060001004, քանակը՝ 120մ^3:
2. Տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)՝ վտանգավորության դասը IV, ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»՝ 9120040001 00 4, քանակը՝ 0.7 տ/տարի:
3. Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ վտանգավորության դասը V, ծածկագիրը՝ ըստ «Թափոնների ցանկի»՝ 31401100 08 09 5, քանակը՝ 4850մ^3:

Շինարարական աղբը և փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Մասիս քաղաքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշման համապատասխան:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, նախատեսվում է՝

- թխկի կարմիր-10 հատ
- ձիակասկ - 4հատ

- գնդաձեվ ակացիա - 25 հատ
- հուդայաձառ - 5 հատ
- բարբարիս - 7 հատ
- գնդաձեվ իլենի - 3 հատ
- սյունաձեվ թույա - 5 հատ
- սիզամարգ - 800մ^2
- սամշիտ - 440մ

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգմնա հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուրը կմատակարարվի ավտոցիտերնով, պայմանագրային հիմունքներով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում: Շինարարկան աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Համաձայն հայտի բազմաբնակարան բնակելի շենքի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, Nox և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանի իրականացում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում 700 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս Օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում Արարատի մարզի Մասիս քաղաքի քաղաքապետարանի շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Արտակարգ իրավիճակների, Առողջապահության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Արարատի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն

ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
3. Նոր կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումները իրականացնել՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018 N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:
4. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել և իրականացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանները:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

Շինարարության ընթացքում և աշխատանքների ավարտից հետո, որպես պարտադիր պահանջ անհրաժեշտ է՝

- շինհրապարակի տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, ապահովել լուսավորությամբ, տեղադրել մուտք գործող արգելող նշաններ,
- ապահովել և իրականացնել ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման միջոցառումները,
- ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել, հնարավորինս բերելով սկզբնական վիճակի,
- ամբողջ շինարարական աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շին հրապարակից,
- շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) զերծ պահել շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով,

- շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումների լվացումը կատարել նախատեսված տարածքներում, որտեղից չի առաջանա ջրի արտահոսք,
- շինհրապարակից ելքի ժամանակ անհրաժեշտ է իրականացնել տեխնիկական միջոցների անվադողերի լվացում,
- տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն՝ համայնքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի,
- ապահովել ծառերի և թփերի 90% կպչողականություն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը, կանաչապատումը իրականցնել տարածի բնակլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային տեսակներով, ձեռնարկել տնկված թփերի, ծառերի, խոտածածկի պահպանում և մոնիտորինգ բուսականության բարձր աճն ապահովելու համար, կպչողականություն չապահովող ծառատեսակները փոխարինել նորերով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի Արարատյան 7 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան